



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազարամյակի մարտահրավերի շրջանակներում
Ոռոգվող գյուղատնտեսության ծրագիր
Ջրից դեպի շուկա բաղադրիչ

Ծրագիր

Ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկումը և ներդրումը
գյուղացիական տնտեսություններում՝ գարնանային և ամառային
ցանքերում

Իրականացնող՝

գյուղատնտեսության աջակցության „Կանաչ արահետ,, ՀԿ

Հաշվետվությունը կազմել են՝

Նունե Սարուխանյան, գ.գ.թ
Շուշան Հովհաննիսյան
Մարիամ Հովհաննիսյան
Ռաֆայել Սարուխանյան, տ.գ.թ
Մարտիրոս Եղիազարյան

Ֆինանսավորող՝ ACDI/VOCA

Երևան- 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ծրագրի նկարագրությունը

- 1.1. ՀՀ-ում տեղակայված ոչ ավանդական մշակաբույսերի ցանքերն ըստ աշխարհագրական տարածքների
- 1.2. Մեր առջև դրված նպատակները
- 1.3. Իրականացված գործողությունները
- 1.4 Արդյունքները
- 1.5 Փորձացուցադրական և արտադրական ցանքերը
- 1.6 Ամառնացան և գարնանացան ցանքերում ներգրավված ֆերմերների կողմից իրականացված ցանքերի համառոտ տվյալները

2. Մարզերի հողակլիմայական պայմանների համառոտ բնութագիրը

- 2.1. Արարատի մարզ
- 2.2 Տավուշի մարզ
- 2.3 Արմավիրի մարզ
- 2.4 Կոտայքի մարզ
- 2.5 Արագածոտնի մարզ
- 2.6 Լոռու մարզ

3. Դիտարկումների արդյունքները

4. Բանջարեղենի արտադրության համեմատական տնտեսական գնահատականը

5. Եզրակացություններ և առաջարկություններ

6. Հավելվածներ

1. Ծրագրի նկարագրությունը

Այսօր մեծ է ոչ ավանդական կամ քիչ տարածված մշակաբույսերի նշանակությունը, և դրանց պահանջը գնալով մեծանում է:

Ներկայումս այս մշակաբույսերի մշակությունը գրեթե բացակայում է ոչ միայն այն պատճառով, որ չկա ձևավորված շուկա, այլև որ մեր ֆերմերներն անտեղյակ են դրանց մշակության տեխնոլոգիաներին, կենսաբանական առանձնահատկություններին և նշանակությանը:

Դրանց համապատասխան տեխնոլոգիաների մշակումը, ցանքի և մշակության ճիշտ ժամկետների որոշումը, հիվանդությունների և վնասատուների դեմ անհրաժեշտ պայքարի իրագործումը կնպաստի դրանց մասսայական մշակությանը: Արտադրության մեջ կներդրվեն այնպիսի ոչ ավանդական մշակաբույսերի տեսակներ, որոնց մշակությունը տնտեսապես արդյունավետ կլինի:

ՀՀ-ում ներկայումս առկա օտարերկրացիների մեծ մասը, ինչպես նաև տեղաբնակների մի փոքր զանգված կարևորում են այդ մշակաբույսերի, օրինակ. քաղցր եգիպտացորենի, արտիշոկի, հազարի, կաղամբի, կանաչեղենի և բանջարային լոբու տարբեր տեսակների դերը և նշանակությունը:

Ծրագրի շջանակներում հիմնել ենք թե գարնանացան և թե ամառնացան փորձացուցադրական ցանքեր, որպեսզի ֆերմերները, որոնք ցանկանում են զբաղվել այդ մշակաբույսերի մշակությամբ, ավելի լավ տիրապետեն այս նոր մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաներին և իրենց ստացած գիտելիքներն ու ձեռքբերած փորձի դրական արդյունքները փոխանցեն համայնքի այլ բնակիչներին:

Փորձացուցադրական ցանքերը տեղադրվել են թվով 16 ֆերմերային տնտեսություններում, որոնց իրականացմանը մասնակցել և արդյունքներից ուղղակի օգտվել են 49 ֆերմերներ: Ծրագրի անուղղակի շահառուներ են համարվել համայնքների ավելի քան 600 ֆերմերներ: Ծրագրի արդյունքներին տեղյակ են եղել նաև համայնքի բնակիչները, որոնք համարվում են անուղղակի շահառուներ և օգտվել են այս ծրագրի արդյունքներից՝ ծանոթանալով ոչ միայն այս բուսատեսակներին, այլև որոշ չափով դրանց մշակության տեխնոլոգիաներին: Անուղղակի շահառուների թիվը կազմում է մոտ 250 մարդ: Բացի այս ամենը, ծրագրում ընդգրկված երիտասարդ մասնագետները, ինչպես նաև Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի ուսանողները, որոնք իրենց պրակտիկական անց են կացրել Կանաչ արահետում, ևս ծանոթացել են այս ծրագրին և ակտիվորեն մասնակցել են բոլոր գործընթացներին:

Ամառնացանը հիմնականում կատարվել է Արարատյան հարթավայրում, նախալեռնային և լեռնային գոտիների որոշ ցածրադիր մասերում՝ ներառելով հիմնականում կարճ վեգետացիա ունեցող մշակաբույսեր:

Այդ տարածքներում հիմնված փորձացուցադրական ցանքերը հատկապես կարևոր էր նրանով, որ ֆերմերները կողմնորոշվեցին, թե հաջորդ տարի որ մշակաբույսերի վրա պետք է կենտրոնանան և որն ավելի մեծ եկամուտ կապահովի իրենց:

1.1. ՀՀ-ում տեղակայված ոչ ավանդական մշակաբույսերի ցանքերը ըստ աշխարհագրական տարածքների



1.2. Ծրագրի նպատակները

- Ոչ ավանդական, բարձր արդյունավետություն ցանքերի փորձարկում և մշակության ներդրում,
- Փորձարկվող մշակաբույսերի վերաբերյալ համապատասխան տեխնոլոգիաների մշակում:

1.3. Իրականացվել են հետևյալ գործողությունները

- այցելել ենք տարածաշրջաններ և ընտրել փորձացուցադրական ցանքերի տարածքները, հաշվի առնելով ֆերմերների ցանկությունները և կարիքները,
- ձեռք ենք բերել փորձացուցադրական ցանքերի համար անհրաժեշտ սերմեր, պարարտանյութեր և այլ անհրաժեշտ միջոցներ,
- պարբերաբար այցելել ենք տարածքներ և հետևել փորձացուցադրական ցանքերի վիճակին,
- ծրագրի իրագործման ընթացքում կատարել ենք համապատասխան գրանցումներ ցանքի, աճի, զարգացման, հասունացման և բերքահավաքի ճշգրիտ ժամկետների վերաբերյալ,
- ծրագրի իրագործման ընթացքում պարբերաբար տեղեկացել ենք կատարված աշատանքների մասին,
- ներկայացրել ենք համապատասխան հաշվետվությունները:

1.4 Արդյունքները

Այս ծրագիրը նպաստել է՝

- ոչ ավանդական մշակաբույսերի մշակության տեխնոլոգիայի վերաբերյալ գիտելիքների տարածմանը,
- սննդի բազմազանությանը,
- գյուղացիական տնտեսությունների զբաղվածության մասնակի ապահովմանը,
- ֆերմերների համար այլընտրանքային եկամտի աղբյուրի ստեղծմանը,
- նոր մշակաբույսերի վերաբերյալ մշակության տեխնոլոգիայի նախագծմանը:

1.5 ՓՈՐՁԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑԱՆՔԵՐ

Փորձերը դրվել են Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզերում՝ բանջարանոցային մշակաբույսերի համար տիպիկ հողատարածքներում: Ներկայացնում ենք ֆերմերների ցանկը ըստ առանձին գոտիների (հարթավայրային, նախալեռնային և լեռնային): Կից ներկայացվում է ավելի մանրամասն տեղեկություններ առաջավոր ֆերմերների մասին, որոնք ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ցուցաբերել են բարձր ակտիվություն, եղել են հետևողական և կատարել են բոլոր գրանցումները (տես հավելված 1): Կատարվել են լուսանկարներ և հաշվետվությանը կից ներկայացվում է նաև ֆոտոալբոմ:

Աղյուսակ 1

Համառոտ տվյալներ գարնանացան և ամառնացան ցանքերում ներգրավված ֆերմերների վերաբերյալ

NN	Ֆերմերի անուն,	Մարզը, համայնքը	Ցանքի ժամկետը	Մշակաբույսերը	Զբաղեցրած տարածքը, մ ²
----	----------------	-----------------	---------------	---------------	-----------------------------------

ը/կ	ազգանուն				
	1	2	3	4	5
1.	Լաուրա Բարսեղյան	Արարատ, Ջրահովիտ	գարնանացան, ամառնացան	պոմիդոր, վարունգ, լոբի, քաղցր եգիպտացորեն	1 120
2.	Մանիկ Գասպարյան	Արարատ, Ջրահովիտ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր	800
3.	Հրունիկ Մանուկյան	Արարատ, Ջրահովիտ	գարնանացան, ամառնացան	պոմիդոր, տաքդեղ, բադրիջան, բանջարային լոբի, քաղցր եգիպտացորեն	800
4.	Լիպարիտ Գասպարյան	Արարատ, Ջրահովիտ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր, տաքդեղ, վարունգ, բադրիջան, կանաչեղեն	1 200
5.	Փառանձեն	Արարատ, Ջրահովիտ	ամառնացան	պոմիդոր, քաղցր եգիպտացորեն, սոխ, տաքդեղ, լոբր, սեխ	800
6.	Քնարիկ Ստեփանյան	Արարատ, Ջրահովիտ	ամառնացան	ծիրան, լոբի, վարունգ, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր	1 200
7.	Քնարիկ Ղազարյան	Արարատ, Ջրահովիտ	ամառնացան	սամիթ, համեն, քաղցր եգիպտացորեն, մաղադանոս, սոխ, վարունգ	700
8.	Հովհաննես Վարդանյան	Արարատ, Արևշատ	գարնանացան, ամառնացան	վարունգ, ձնաուլոռ, բրոկոլի, կաղամբ, ծնեբեկ պրասսաոխ, քաղցր եգիպտացորեն, բամիա, պոմիդոր, շաղգամ, արտիշոկ, բադրիջան, դդմիկ, ռեհան, ծաղկակաղամբ, չինական տաքդեղ	6 300
9.	Նարինե Հակոբյան	Արմավիր, Բամբակաշատ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր, տաքդեղ, վարունգ, բադրիջան, ծնեբեկ, բամիա, սիսեռ, սոխ	1 200
10.	Էլմիրա Հակոբյան	Արմավիր, Բամբակաշատ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր, տաքդեղ, վարունգ, բադրիջան, ծնեբեկ, բամիա, սիսեռ, սոխ	1 200
11.	Կառլեն Հակոբյան	Արմավիր, Բամբակաշատ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր, տաքդեղ, վարունգ, բադրիջան, ծնեբեկ, բամիա, սիսեռ, սոխ	1 200
12.	Ցողիկ Ազիզյան	Արմավիր, Բամբակաշատ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր, տաքդեղ, վարունգ, բադրիջան, ծնեբեկ, բամիա, սիսեռ, սոխ	1 200
13.	Կարինե Հակոբյան	Արմավիր, Բամբակաշատ	գարնանացան, ամառնացան	լոբի, քաղցր եգիպտացորեն, պոմիդոր, տաքդեղ, վարունգ, բադրիջան, ծնեբեկ, բամիա, սիսեռ, սոխ	1 200
14.	Մնացական Ավագյան	Արմավիր, Բամբակաշատ	ամառնացան, գարնանացան	Վարունգ, պոմիդոր, սոխ, ծմերուկ	10 000
15.	Վլադիմիր Ավագյան	Արմավիր, Բամբակաշատ	ամառնացան	Վարունգ, պոմիդոր, պոմիդոր, լոբի	5 000
16.	Լյուդմիլա Սադաթեյան	Արմավիր, Բամբակաշատ	ամառնացան	ճակնդեղ, կանաչեղեն, հազար, ծնեբեկ, բադրիջան, տաքդեղ	1 500
17.	Ալվարդ Թովմասյան	Արմավիր, Նալբանդյան	ամառնացան	Սպիտակագլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, բրոկոլի,	12 000
18.	Սուսաննա Գասպարյան	Արմավիր, Նալբանդյան	ամառնացան	Լոբի, կանաչեղեն, վարունգ	1 000
19.	Սուսաննա Մարգարյան	Արմավիր, Նալբանդյան	ամառնացան	Կանաչեղեն, լոբի, վարունգ	1 300
20.	Լիլիթ Համբարձումյան	Արմավիր, Նալբանդյան	ամառնացան	Վարունգ, կանաչեղեն, լոբի	1 000
21.	Արտավազդ Ղազարյան	Արմավիր, Նալբանդյան	ամառնացան, գարնանացան	Վարունգ, դդմ, կանաչեղեն, լոբի, տաքդեղ, պոմիդոր, բադրիջան	10 000
22.	Անահիտ	Արմավիր,	ամառնացան	կանաչեղեն, լոբի, վարունգ, հազար	1 000

	Մարկոսյան	Նալբանդյան			
23.	Արմեն Ղազարյան	Արմավիր, Նալբանդյան	ամառնացան	կանաչեղեն, լոբի, վարունգ, հազար	600
24.	Աշոտ Սարգսյան	Արմավիր, Հայթաղ	Ամառնացան	Կանաչեղեն, կարտոֆիլ, ծաղիկ	1 000
25.	Ժաննա Իսրայելյան	Արմավիր, Հայթաղ	Ամառնացան	Կանաչեղեն, կարտոֆիլ, ծաղիկ	1 000
26.	Էմմա Քալաշյան	Լոռի, Գարգառ	Գարնանացան, ամառնացան	Կաղամբ, կանաչեղեն, բրոկոլի, կոլրաբի, հազար	800
27.	Սուրեն Մեսրոպյան	Արմավիր, Մրգաշատ	Ամառնացան	վարունգ, լոբի, կանաչեղեն, սոխ, ծմբուկ, կանաչեղեն	15 000
28.	Վարդեգո Դավթյան	Արմավիր, Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթի տեսակներ, բաղրիջան, տաքդեղ	800
29.	Սկրտիչ Իսախանյան	Արմավիրի Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթի տեսակներ, բաղրիջան, տաքդեղ	500
30.	Էմմա Իսախանյան	Արմավիր, Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթի տեսակներ, բաղրիջան, տաքդեղ	500
31.	Սմբատ Բաբայան	Արմավիր, Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթի տեսակներ, բաղրիջան, տաքդեղ	600
32.	Սիրանուշ Բաբայան	Արմավիր, Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթի տեսակներ, բաղրիջան, տաքդեղ	600
33.	Արմինե Բունիաթյան	Արմավիր, Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթ, բաղրիջան, տաքդեղ	500
34.	Անահիտ Բաբայան	Արմավիր, Լուկաշին	Գարնանացան	Ծաղկակաղամբ, կոլրաբի, բրոկոլի, կարմիր կաղամբ, սալաթի տեսակներ, բաղրիջան, տաքդեղ	600
35.	Արմինե Մուրադյան	Լոռի, Գարգառ	գարնանացան, ամառնացան	Լոբի, ոլոռ, կանաչեղեն, հազար, կաղամբ, կոլրաբ, բրոկոլի, ծնեբեկ	1200
36.	Ջուլիետա Բալայան	Լոռի, Գարգառ	գարնանացան, ամառնացան	կանաչեղեն, հազար, կաղամբ, լոբի	800
37.	Էլմիրա Ճշմարիտյան	Լոռի, Գարգառ	գարնանացան, ամառնացան	կանաչեղեն, հազար, կաղամբ, լոբի	900
38.	Մարինե Ղամբարյան	Լոռի, Գարգառ	գարնանացան, ամառնացան	կանաչեղեն, հազար, կաղամբ, լոբի	900
39.	Վարսիկ Քալաշյան	Լոռի, Գարգառ	գարնանացան, ամառնացան	կանաչեղեն, հազար, կաղամբ, լոբի	800
40.	Գնել Մխիթարյան	Արագածոտն, Աշտարակ	ամառնացան	Բանջարային լոբի, բրոկոլի, կոկորաբի, ոլոռ, վարունգ, հազար, բողկ	1900
41.	Աննա Մովսիսյան	Արագածոտն Աշտարակ	ամառնացան	Բանջարային լոբի, բրոկոլի, կոկորաբի, ոլոռ, վարունգ, հազար, բողկ	1900
42.	Իրինա Գրիգորյան	Կոտայք, Ձորաղբյուր	գարնանացան, ամառնացան	Ծնեբեկ, քաղցր եգիպտացորեն, լոբի, բանջարեղեն, կանաչեղեն	1000
43.	Ամալյա Ներկարարյան	Տավուշ, Գանձաբար	գարնանացան, ամառնացան	Բանջարային լոբի, քաղցր եգիպտացորեն,	800

44.	Զարմայիլ Մարդանյան	Տավուշ, Գանձաքար	գարնանացան, ամառնացան	Բանջարային լոբի, քաղցր եգիպտացորեն,	800
45.	Էմմա Հակոբյան	Տավուշի, Գանձաքար	գարնանացան, ամառնացան	Բանջարային լոբի, քաղցր եգիպտացորեն,	1400
46.	Սենիկ Սառիկյան	Տավուշ, Գանձաքար	գարնանացան, ամառնացան	Կարտոֆիլ, լոբի, վարունգ, տաքդեղ, պոմիդոր, եգիպտացորեն, առվույտ	1800
47.	Աննա Վիրաբյան	Տավուշ, Խաշթառակ	ամառնացան	Բրոկոլի, պրասսառիս, բանջարային լոբի, կանաչեղեն, կարտոֆիլ	220
48.	Վահագ Սարիբեկյան	Տավուշ, Խաշթառակ	ամառնացան	Բրոկոլի, պրասսառիս, բանջարային լոբի, ֆրանսիական լոբի	1200

Յուրաքանչյուր ֆերմերի համար փորձադաշտի ընդհանուր մակերեսը կազմել է 220-1000մ²: Կան ֆերմերներ, որոնց փորձադաշտի ընդհանուր մակերեսը կազմում է 5000մ² և ավելի:

Արտադրական ցանքերն ամբողջությամբ իրականացվել են ֆերմերների կողմից: Դրանք տատանվել են 99.8420 մ² սահմաններում: Փորձարկվել են 50-ից ավել բանջարանոցային մշակաբույսեր, որոնց մասին մանրամասն տեղեկությունները տրված են հավելվածում: Մշակաբույսերի տեսակի ընտրությունը Փորձադաշտերում կատարվել է ըստ ֆերմերների նախասիրության, ինչպես նաև հաշվի է առնվել մեր կողմից տրամադրված խորհուրդները: Ֆերմերի համար առայժմ անհայտ ոչ ավանդական մշակաբույսերի ցանքերը կատարվել է շատ փոքր տարածքների վրա (որոշ կանաչեղեններ 5-50մ² յուրաքանչյուրի մոտ 5-10 ական ոչ ավանդական տեսակ):

Փորձամարզերի տեղաձևման և փորձերի հիմնադրման համար անհրաժեշտ են եղել սերմացու, սածիլներ, պարարտանյութեր, թունանյութեր, կենսաբանական պատրաստուկներ և այլն, որոնք ծրագրի շրջանակներում տրամադրվել են ֆերմերներին: Ֆերմերներն օգտագործել են նաև սեփական միջոցներով ձեռք բերված սերմեր և այլ միջոցներ: Ծրագրով նախատեսված 12 ֆերմերների (գարնանացանի համար` 5 և ամառնացանի համար` 7) փոխարեն փորձնական տարածքներում աշխատել ենք 48 ֆերմերների հետ:

Վեգետացիայի ընթացքում կատարվել են հետևյալ ֆենոլոգիական դիտումները, հաշվառումներն ու կենսաչափումները.

1. Որոշվել են

- ֆենոփուլերի անցման ժամկետները,
- վեգետացիայի տևողությունը,
- բույսերի հասունացման և բերքահավաքի ճիշտ ժամկետները:

Հաշվարկվել է բերքատվությունն ըստ առանձին բերքահավաքների:

Կատարվել են նաև`

- վնասատուների և հիվանդությունների հաշվառում,
- պայքարի քիմիական և ոչ քիմիական եղանակների կիրառում:

Ըստ առանձին մարզերի բուսատեսակները ընտրելիս հաշվի են առնվել տարբեր մարզերի բնակլիմայական պայմանները: Ցանքերը կատարվել են ՀՀ բոլոր բնա-կլիմայական գոտիներում.

- հարթավայրային՝ Արարատ, Արմավիր,
- նախալեռային Կոտայք, Արագածոտն և
- լեռնային՝ Տավուշ, Լոռի:

2. ՄԱՐԶԵՐԻ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1 Արարատի մարզ

Արարատյան հարթավայրը գտնվում է Հայաստանի հանրապետության հարավ-արևմտյան մասում, Արաքս գետի ձախ ափին. հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերից շրջապատված է Արագածի և Արայի լեռան լեռնազանգվածներով

Հողմահարված հրաբխային զանգվածները ջրային հոսանքների ազդեցությամբ բերվել և կուտակվել են հարթավայրում: Արդյունքում ձևավորվել են հզոր ալյուվյալ-դելյուվյալ կարբոնատային բերվածքներ, որոնց վրա էլ ձևավորվել է հիմնական հողատիպը:

Կիսանապատային գորշ հողերի հիմքի վրա Արարատյան հարթավայրում ձևավորվել են մարգագետնային գորշ հողերը, որոնց քիմիական կազմի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 1–ում:

Քիմիական անալիզների տվյալները ցույց են տալիս, որ հումուսի պարունակությունը գորշ կիսանապատային հողերի վերին հորիզոնում չի գերազանցում 1.85%-ը և խորության հետ նվազում է: Դա կապված է կլիմայական պայմաններից: Տարեկան շուրջ 16 ց/հա բուսական մնացորդ է կուտակվում գորշ հողերում, որն էլ ակտիվ պայմաններում քայքայվելով մինչև վերջ, քիչ հումուս է առաջացնում:

Բույսերի ապահովվածությունը սննդատարերով իմանալու համար որոշված են NPK-ի բույսերին մատչելի ձևերը: Նշենք նաև որ այդ տարրերի ընդհանուր պարունակությունները զգալիորեն տարբերվում են մատչելի քանակություններից: Հողում տարրերի ընդհանուր պարունակությունները հետևյալն է. ազոտ՝ 0.2%, ֆոսֆոր՝ 0.2%-0.3%, կալիում՝ 2-3%:

Ըստ ցուցանիշների մեր հողերը պատկանում են թույլ պահանջ ունեցողների խմբին: Ֆոսֆորի, կալիումի պարունակությունները հողի վերին հորիզոններում կազմում են համապատասխանաբար 273.1-328.0 մգ/կգ և 787.0-788.0մգ/կգ և ըստ խորության նվազում է: Հողերը ֆոսֆորի և կալիումի նկատմամբ թույլ պահանջ ունեն:

Համաձայն Ագրոքիմիայի և հողագիտության ինստիտուտի տվյալների որոշված են սննդատարերի սահմանային թվերը, որը ներկայացնում ենք աղյուսակ 2-ում:

Արարատյան դաշտը գտնվում է անապատատա-փաստանային գոտում: Բազմամյա տվյալներով (Մասիսի տարածաշրջանում կատարված չափումների համաձայն) օդի միջին տարեկան ջերմաստիճանը 11.8°C է բացարձակ նվազագույն ջերմաստիճանը տատանվում է -27-30°C սահմաններում; բացարձակ առավելագույնը +39-

+40°C է; տարեկան տեղումները 272 մմ; անսառնամանիք օրերի թիվը 280-ն է; դրական ջերմաստիճանների գումարը (0°-ից բարձր) կազմում է 4500-4800°, ակտիվ ջերմաստիճանների գումարը (10°-ից բարձր)՝ 4000-4200°; արեգակնային լուսավորության տարեկան գումարային տևողությունը կազմում է 2627 ժամ: Տարեկան տեղումների առավելագույն քանակությունը թափվում է գարնանը, մասնավորապես մայիս ամսին:

2.2. Տավուշի մարզ

Իջանի տարածաշրջանը ընդգրկում է ագրոկլիմայական չափավոր տաք, խոնավ գոտու մեջ: Այն գտնվում է անտառային բնահողային գոտում: 0°-ից բարձր արդյունավետ ջերմության գումարը այստեղ կազմում է՝ 3650-3900C⁰, իսկ 10°C բարձր ջերմաստիճանների գումարը՝ 2450-3600⁰C : Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 450-560մմ-ի: Գոտին աչքի է ընկնում ճափավոր խոնավ պայմաններով: Օդի հարաբերական խոնավությունը՝ 70-80%: Խոնավության գործակիցը տարվա ընթացքում կազմում է՝ 0.5-0.8: Ձմեռը լինում է մեղմ, կայուն ձյունածածկով: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը կազմում է շուրջ -2°, առավելագույնը՝ -20⁰:

Գարունը չափավոր խոնավ է, երկարատև: Ամառը տաք է, երկարատև, համեմատաբար խոնավ: Օդի հարաբերական խոնավությունը հազվադեպ է իջնում մինչև 30%-ի: Աշունը չափավոր է, ձմեռը՝ խոնավ: Այսպիսի կլիմայական պայմանները հնարավորություն են ստեղծում երկրագործությունը վարել նաև անջրդի պայմաններում:

Բուսական ծածկույթը խայտաբղետ է, զգալի տեղ են զբաղեցնում նաև անտառային չորադիմացկուն բուսականությունը:

Հողի Բնութագիրը: Այս տարածաշրջանում հիմնականում ձևավորվել են անտառային դարձնագույն հողերը, որոնց բնորոշ է զգալի հզորությունը՝ միջակ և հզոր: Գենետիկական հորիզոնները լավ դիֆերենցված են, հունուսային շերտին բնորոշ է դարչնագույն գունավորումը: Ստրուկտուրան վերին հորիզոններում հատիկային է ավելի խորը շերտերում ընկուզանման: Մեխանիկական կազմը կավավազային և թեթև կավային է: Հողի ֆիզիկական հատկությունները միանգամայն նպաստավոր են մշակաբույսերի աճի և զարգացման համար: Ըստ հողի անալիզի արդյունքների սրանցում հունուսի պարունակությունը վերին հունուսային շերտում կազմում է 3,9%, կարբոնատներինը՝ 0,95%, որը ըստ խորության արագ ավելանում է, ջրային սուսպենզիայի PH-ը 7,7 է, կլանման տարողունակությունը՝ 35,5մգ/էկվ 100 գրամ հողում:

2.3 Արմավիրի տարածաշրջանի հողակլիմայական պայմանները

Արարատյան դաշտը գտնվում է Հայաստանի Հանրապետության կիսանապատային գոտում, ծովի մակերևույթից 800-1000մ բարձրության վրա: Ռելիեֆը հիմնականում հարթ է, ունի ոչ մեծ թեքություններ Արաքս գետի ուղղությամբ: Մակրոռելիեֆը հարթավայրային է, ունի թմբավորություններ և ալիքավորություններ: Արարատյան հարթավայրում հոսում են Հրազդանն ու Քասախը, Ագատն ու Վեդին, որոնք օգտագործվում են մշակաբույսերի ոռոգման նպատակով:

Կլիման չոր ցամաքային է, բնորոշվում է շոգ, չոր ամառներով և ցուրտ ձմեռներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 11-12⁰, տարվա ամենացուրտ՝ հունվար ամսվա միջին ջերմաստիճանը՝ -8-10⁰, իսկ ամենատաք՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ 28-30⁰:

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -30⁰-ի, իսկ առավելագույնը՝ +40⁰-ի: Զրոյից բարձր ջերմաստիճանների տարեկան գումարը կազմում է 4500-5000⁰C: Ակտիվ ջերմաստիճանների գումարը (10⁰-ից բարձր) 4000-4200⁰: Կայուն ձյունածածկ առաջանում է ոչ բոլոր տարիներին:

Առավելագույն ամպամածությունը մեծ մասամբ նկատվում է ձմռանը, իսկ մառախլապատ օրերի թիվը տարվա ընթացքում աննշան է՝ 6-22 օր: Վեգետացիայի տևողությունը բավական երկար է, ինչը թույլ է տալիս միևնույն տարածքում մշակել երկրորդ մշակաբույս (խոզանացան): Այս պայմաններում ընդունված է հացահատիկից հետո մշակել վարունգ, եգիպտացորեն սիլոսի համար, վաղահաս կարտոֆիլ, լոբի և այլն:

Ամռան ընթացքում օդի հարաբերական խոնավությունը հասնում է 35-55%-ի: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 250-300մմ, որից մոտ 100մմ-ը տեղում է նոյեմբեր-մարտ ամիսներին:

Գարնանային ուշ ցրտահարություններ դիտվում են մինչև ապրիլի վերջերը, իսկ վաղ աշնանային ցրտահարությունները՝ հոկտեմբերի կեսերին: Տարեկան տեղումների առավելագույն քանակությունը թափվում է գարնանը՝ մայիսին: Գերակշռում են հյուսիս-արևելյան թույլ քամիները:

Այս պայմաններում հնարավոր է վարել երկրագործություն միայն ոռոգման դեպքում:

Չենց այս կլիմայական ցուցանիշներով էլ պայմանավորված է տարածաշրջանի բուսածածկի աղքատությունը՝ աճում են միայն կարճ վեգետացիա ունեցող բույսեր՝ էֆեմերներ և էֆեմերոիդներ: Չիմնականում տարածված են կիսաանապատային գոտուն բնորոշ բուսականության ներկայացուցիչները՝ օշինդր, ուղտափուշ, իշակաթ-նուկ, արվանդակ, տատասկ, պատատուկ, գաղձ և այլն:

Չողերը - կիսաանապատային գոտու պայմաններում ձևավորվել են կիսաանապատային գորշ, մարգագետնային գորշ ոռոգելի, աղուտ և ալկալի հողատիպերը: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են չոր և շոգ, նվազ բուսականության պայմաններում: Այս հողերը պարունակում են քիչ քանակությամբ հումուս (1-1.5%) և ունեն սակավ հզորություն, կարբոնատների մեծ պարունակություն: Մեխանիկական կազմը կավավազային է, հողի ստրուկտուրան՝ փոշեհատիկային, երբեմն քարքարոտ:

Արարատյան դաշտում մարդու տնտեսական գործունեության շնորհիվ գորշ կիսաանապատային հողերից ձևավորվել են ոռոգելի մարգագետնային գորշ հողերը, որոնք գորշ կիսաանապատային հողերի համեմատ ավելի բերրի են, հարուստ հումուսով, համեմատաբար հզոր, ավելի պակաս կարբոնատների պարունակությամբ: Բույսերին անհրաժեշտ սննդանյութերի պարունակությունը համեմատաբար բարձր է: Այդ հողերի վրա են գտնվում պտղատու և խաղողի այգիների, հացահատիկի հիմնական տարածությունները:

Հունուսի պարունակությունը A հորիզոնում կազմում է 1.5-3.0%, որը խորության հետ նվազում է: Այս հողերի հզորությունը հասնում է 40սմ մինչև 70-80սմ: Ստրուկտուրան հիմնականում փոշեհատիկա-կնձիկային է:

Ընդհանուր ազոտի պարունակությունը վերին շերտերում կազմում է 0.1-0.15, ֆոսֆորը 0.2-0.25, կալիումը՝ 2.5-3.0%: Մեխանիկական կազմը միջին և ծանր կավավազային է, ֆրակցիաների գրեթե կեսը կազմում է ֆիզիկական կավը (<0.01 մմ), որը հողի վերին և միջին շերտերում բաշխված է համաչափ: Ստորին շերտերի թեթև կազմը պայմանավորված է հողառաջացող հանքատեսակներով: Այդ հողերը բնութագրվում են փոխանակային կատիոնների զգալի պարունակությամբ (25.03-50.11 մգ/էկվ 100գ հողում), հիմնականում գերակշռում են կալցիումն ու մագնեզիումը, նատրիումը համեմատաբար քիչ է (մինչև 5%):

Հողային լուծույթի ռեակցիան մոտ է չեզոքին կամ թույլ թթվային է: Այս հողերն օժտված են բարձր բուֆերականությամբ: Նշենք նաև, որ սննդատարրերի ընդհանուր պարունակությունները զգալիորեն տարբերվում են մատչելի քանակություններից: Այս հողերը շատ աղքատ են ազոտի, ֆոսֆորի, ապա երկաթի, ցինկի, մոլիբդենի պարունակությամբ, շատ հարուստ են մանգանով և պղինձով:

Ոռոգելի մարգագետնային գորշ հողերը բնութագրվում են ջրաֆիզիկական բարենպաստ հատկություններով: Ջրակայուն ագրեգատների ընդհանուր քանակությունը վերին հորիզոններում կազմում է մոտ 55% և խորության հետ ավելանում է: Միկրոտարրերի քանակությունը, որոնք ներկայացված են հողի վերին հորիզոններում խոշոր ֆրակցիաներով, գերազանցում է հողի զանգվածի կեսը, ինչը լավացնում է հողի ջրաֆիզիկական հատկությունները:

Արարատյան դաշտում տարածված են շուրջ 30000 հա աղուտ-ալկալի հողեր, որոնք ձևավորվել են գրունտային ջրերի բարձր մակարդակի և այդ ջրերում լուծելի աղերի բարձր պարունակության պայմաններում: Այս հողերը պիտանի չեն մշակության համար աղերի բարձր պարունակության հետևանքով: Քիմիական մեխորացիայի են ենթարկվել այս հողերից շուրջ 5000 հա և դրվել մշակության տակ:

2.4 Կոտայքի մարզ

Կոտայքի մարզը գտնվում է ծովի մակերևույթից 1400-2200մ բարձրության վրա, չոր լեռնա-տափաստանային գոտում: Մեր փորձերը դրվել են Ձորաղբյուրի տարածքում (1400 մ բարձրության վրա, չոր լեռնատափաստանային գոտի) պայմաններում:

Այստեղ ռելիեֆը մի փոքր լեռնային է, կտրտված:

Կլիմայական պայմանները չոր, կոնտինենտալ են: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը տատանվում է 400-600մմ սահմաններում, ձմռանը, շատ քիչ բացառություններով, ամենուրեք առաջանում է կայուն ձյունածածկ: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 8-10⁰C:

0⁰C բարձր արդյունավետ ջերմության գումարը 3500-4000⁰ է, իսկ 10⁰C-ից բարձրը՝ 2000⁰C: Ամսական միջին ջերմաստիճանը հուլիս, օգոստոս ամիսներին կազմում է 17-25⁰, բացարձակ մաքսիմումը՝ 32-38⁰, բացարձակ մինիմումը՝ -25-33⁰: 5⁰-ից բարձր ջերմությունով օրերի թիվը կազմում է 211-229, իսկ 10⁰-ից բարձրը՝ 136-170օր: Վեգետացիոն շրջանը 2-5 շաբաթ կարճ է, քան Արարատյան հարթավայրում:

Այս գոտում անսառնամանիք ժամանակաշրջանը տևում է 190-230օր: Ամառը չորային է, տաք: Երաշտաբեր-չորային եղանակ քիչ է դիտվում, հուլիսին 50%-ի չափով գերակշռում է չափավոր-չորային եղանակ: Հոկտեմբեր ամսվա միջին ջերմաստիճանը իջնում է մինչև 10-13⁰: Սկսվում են ամպամած և անձրևային եղանակները:

Հողերը - Չոր տափաստանային գոտու պայմաններում, տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղհեղաբերուկ գոյացումների վրա ձևավորվել են շագանակագույն հողերը, երեք ենթատիպերով (շագանակագույն):

Շագանակագույն հողերի ստորաբաժանումը ըստ ենթատիպերի պայմանավորված է հիմնականում հումուսի և կարբոնատների պարունակությամբ, երբեմն երկաթի միացությունների առկայությամբ: Շագանակագույն հողերի հզորությունը տատանվում է լայն սահմաններում (30-40սմ, մինչև 50-60սմ և ավելի) և պայմանավորված է ռելիեֆով և տեղանքի բարձրությամբ: Վեգետացիայի ընթացքում տեղումները քիչ են, որը զուգակցելով բարձր ջերմության հետ առաջ է բերում հողի մակերևույթից ջրի ինտենսիվ գոլորշիացում, հողը ուժեղ չորանում է:

Ըստ մեխանիկական կազմի շագանակագույն հողերը հիմնականում միջին և ծանր ավազակավային են, մակերեսից սովորաբար փոշիացած: Մեխանիկական կազմում գերակշռում են 0.1մմ-ից ավելի մանր մասնիկները: Այս հողերն ավելի քարքարոտ ու կմախքային են, քան կիսանապատային հողերը: Շագանակագույն հողերի տարածման գոտում ռելիեֆի պատճառով զարգացած են հողատարման պրոցեսները: Շագանակագույն հողերի գերակշռող մասը ներկայացված են կարբոնատային տարբերակներով: Պրոֆիլի խորացմանը զուգահեռ կարբոնատությունը սովորաբար աճում է: Այս հողերում հումուսի պարունակությունը 2-4% է: Հումուսային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

Շագանակագույն հողերն աչքի են ընկնում բավական ամուր կառուցվածքով, վարելաչերտի սահմաններում հողի ամրությունը տատանվում է 3.52-5.72կգ/սմ² սահմաններում: Հողի կլանող կոմպլեքսը հագեցած է հողալկալի մետաղներով, կլանման տարողությունը ցածր է՝ 20-35մգ/էկվ 100գ հողում: Պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ 10-20 մինչև 25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացում և ամրացում:

Այս հողերը բույսերին անհրաժեշտ սննդանյութեր՝ հատկապես ազոտ, ֆոսֆոր, կալիում քիչ են պարունակում և մշակաբույսերից բարձր բերք է ստացվում միայն պարարտանյութերի կիրառման պայմաններում:

Գարունն այս ոտում կարճ է, անկայուն, խոնավ: Այն սկսվում է մարտի երրորդ տասնօրյակից և տևում է մինչև հունիսի սկզբները: Հյուսիսից ներթափանցող սառը օդը կարող է գարնան երկրորդ կեսին առաջ բերել ցրտահարություններ: Գարնանային ուշ ցրտահարությունները լինում են հիմնականում մարտի վերջին, երբեմն էլ ապրիլի վերջին: Գարնանը, ձյան հալվելուն պես ջերմաստիճանը ինտենսիվ կերպով բարձրանում է և մարտի վերջից մինչև ապրիլ հասնում մինչև 12°C:

Ամառը երկար է , այն շարունակվում է մինչև սեպտեմբերի վերջը: Ամռան առաջին կեսը բնութագրվում է չոր եղանակով՝ 20°C միջին օրեկան ջերմաստիճանով: Հուլիսին այն հասնում է մինչև միջինը 25°C: Ամռանը օդի առավելագույն ջերմաստիճանը հասնում է 38°C, իսկ օդի հարաբերական խոնավությունը իջնում է մինչև 40 – 42%-ի:

Աշունը սկսվում է սեպտեմբերի վերջերից և տևում է մինչև նոյեմբերի վերջը: Օդի միջին ամսեկան ջերմաստիճանն այս շրջանում իջնում է մինչև 11.6 – 12.8°C: Տարվա ընթացքում անսառնամանիք օրերի թիվը տատանվում է 200 – 250-ի սահմաններում:

Ակտիվ ջերմաստիճանների տարեկան գումարը կազմում է 3700 - 3800°C, իսկ 10°C – ից բարձր ջերմաստիճանների տարեկան գումարը կազմում է 3200 - 3300°C: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը մոտավորապես 10.0°C է:

Տարվա ընթացքում տեղումների միջին քանակը 350 – 400 մմ է: Սթնոլորտային տեղումների քանակը մեծ է ապրիլ – մայիս ամիսներին, իսկ հուլիս – սեպտեմբեր ամիսներին խիստ նվազում է: Սթնոլորտային տեղումների քանակը վեգետացիայի ընթացքում կազմում է 200 – 250մմ:

Կոտայքի տարածաշրջանի հողերի ֆիզիկա-մեխանիկական կազմի վերլուծությունը կատարվել է հողաշերտի 0-45 սմ խորության վրա: Այդ տվյալների համաձայն հողաշերտում հիգրոսկոպիկ խոնավությունը տատանվում է 3.42-4.13%, իսկ հումուսի քանակը՝ 3.3-3.8%-ի սահմաններում, ունեն հիմնային ռեակցիա:

Կարբոնատների պարունակության տեսակետից հողերը մեծ մասամբ բավականին հարուստ են, որտեղ կլանված ածխաթթվի քանակը տատանվում է 1.75-3.8%-ի սահմաններում, ունեն հիմնային ռեակցիա:

Ըստ իրենց հիմնայնության, որը պայմանավորված է առաջին հերթին Ca-ի և ապա Na-ի բիկարբոնատներով, ինչպես նաև չոր մնացորդի ու հանքային մասի քանակի ուղղահայաց դասավորման, առանձնապես չեն տարբերվում սևահողերից:

Կլանված կատիոնների քանակը վերին հորիզոնում կազմում է 52.13 միլ. էկվ., որտեղ որպես օրինաչափություն գերակշռում է Ca –ի կատիոնը:

Նկարագրվող հողերը բույսերին անհրաժեշտ շարժուն սննդանյութերի պարունակությամբ բնութագրվում են հետևյալ կերպով՝ ազոտի շարժուն ձևերով թույլ են ապահովված և կարիք ունեն ազոտական պարարտանյութերով պարարտացման, ֆոսֆորի շարժուն ձևերով՝ այս հողերը ծայրաստիճան աղքատ են, իսկ K-ի փոխանակային ձևերով՝ լավ: Վերջինս պայմանավորված է նրանով, որ Հրազդան գետի ջուրը, որը այստեղ ունի ոռոգիչ նշանակություն, շատ K են պարունակում: Բուսածածկույթն այստեղ ավելի լավ է զարգանում:

Շականակագույն հողերն ըստ իրենց բնական հատկությունների ու բերքատվության համար անհրաժեշտ պոտենցիալ հնարավորությունների, բացի հացահատիկային հատիկաընդեղեն ու կերային բույսերից, մեծ մասմբ պիտանի են նաև բանջարանոցային և բուսաբուծական այլ մշակաբույսերի համար՝ գազար, ճակընդեղ, կաղամբ և կարտոֆիլ:

2.5.Արագածոտնի մարզ

Արագածոտն մարզը հյուսիս-արևելքում սահմանակից է Շիրակի, հյուսիսային մասում՝ Լոռու, արևելյան մասում Կոտայքի մարզերին: Արևմտյան կողմի զգալի մասը սահմանակից է Արմավիրի մարզին: Նախալեռնային գոտին գտնվում է ծովի մակերևույթից 800-1500մ բարձրության վրա, որի ամենաբարձր գագաթը Արագածն է՝ 4090մ: Գոտում արտահայտված է ուղղահայաց գոտիականությունը, յուրաքանչյուրը իրեն բնորոշ լանդշաֆտներով և բուսական ֆլորայով: Մարզի կլիմայական պայմանները միանգամայն բարերեր ազդեցություն են թողնում պտղատու ծառատեսակների և բանջարաբուստանային մշակաբույսերի աճի, զարգացման, բերքատվության վրա:

Շագանակագույն հողերի տարածման գոտում կլիման չոր է, կոնտինենտալ, պարզ արտահայտված չորության նշաններով: Ամսական միջին ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին կազմում է 17-25⁰, 5⁰-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը՝ 211-229, իսկ 10⁰-ից բարձր՝ 136-170: Վեգետացիոն շրջանն այստեղ 2-7շաբաթով կարճ է, քան Արարատյան դաշտում: Այս գոտու պայմաններում երկրագործությունը կարելի է վարել ինչպես ջրովի, այնպես էլ անջրդի պայմաններում:

Չողի կազմության բնութագիրը: ՉՉ լեռնատափաստանային չորային գոտում, չոր տափաստանային հողակազմող պրոցեսների հետևանքով ձևավորվել են շագանակագույն հողերը, որոնք գրավում են զգալի տարածություններ, հանդիստում են բոլոր գյուղատնտեսական գոտիներում, ամենատարածված հողատիպերից մեկն է: Ներկայացվում են շատ տարատեսակներով, հանդիպում են ինչպես սակավահումուսային և սակավահզոր, այնպես էլ հզոր շագանակագույն հողեր՝ հումուսի բարձր պարունակությամբ (մինչև 4-4.5%):

Շագանակագույն հողերը զբաղեցնում են մոտ 500 հազար հեկտար տարածք, տարածվում են ծովի մակերևույթից 1300-1700մ բարձրության վրա: Շագանակագույն հողերի հզորությունը տատանվում է լայն սահմաններում և պայմանավորված է ռելիեֆով և տեղանքի բարձրությամբ: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը հիմնականում միջին և ծանր ավազակավային են, մակերեսից սովորաբար փոշիացած: Մեխանիկական կազմում գերակշռում են 0.1մմ-ից ավելի մանր մասնիկները:

Շագանակագույն հողերի տարածման գոտում բավական զարգացած են էրոզիոն երևույթների հետ կապված հողատարման պրոցեսները, որը հիմնականում կախված է ռելիեֆից և հողի մշակման համակարգից: Այս հողերը հիմնականում կարբոնատային են, ըստ որում հողի պրոֆիլի խորացմանը զուգընթաց կարբոնատությունը աճում է:

Շագանակագույն հողերի վարելաչերտում հումուսի պարունակությունը տատանվում է 2-4, ազոտինը՝ 0.13-0.25%-ի սահմաններում: Ընդհանուր ֆոսֆորի պարունակությունը կազմում է 0.1-0.18%: Այս հողերը հարուստ են կալիումով, որի ընդհանուր պարունակությունը հասնում է մինչև 2.5%: Ջրային լուծույթի ռեակցիան հիմնային է՝ PH=7.6-8.4: Այս հողերի կլանող կոմպլեքսը հագեցած է հիմքերով, որոնցից գերակշռում է Ca-ը: Այս հողերը աղքատ են մատչելի ազոտով, դյուրալույծ ֆոսֆորի պարունակությունը համեմատաբար պակաս է, ընդհանուր առմամբ լավ են ապահովված կալիումով, սակայն նույնիսկ այս պայմաններում կարտոֆիլի, պտղատուները դրական արդյունք են տալիս կալիումական պարարտանյութերի կիրառման դեպքում: Փորձադաշտից 0-25սմ խորությունից վերցված հողային նմուշի

լաբորատոր պայմաններում կատարած քիմիական անալիզի տվյալները(աղյուսակ 3) ցույց տվեցին, որ 100գ հողում շարժուն ազոտը կազմում է 1.47մգ, ֆոսֆորը՝ 3.9մգ, կալիումը՝ 55.68մգ, իսկ NaCl-ը՝ 0.95մգ/էկվ 100գ հողում: Այստեղից պարզ է, որ փորձադաշտի հողը աղքատ է ազոտից, միջակից թույլ է ապահովված ֆոսֆորով և լավ ապահովված կալիումով: Հունուսային հորիզոնի հզորությունը կազմել է 48սմ, իսկ հունուսի պարունակությունը՝ 3.1% :

2.6 Լոռու մարզ

Լոռու մարզը (3803 քկմ տարածքով) գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան մասում: Այն սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, Շիրակի, Արագածոտնի, Տավուշի և Կոտայքի մարզերին:

Մարզն իր մեջ ընդգրկում է նախկին Թումանյանի (1111 քկմ), Գուգարքի (776 քկմ), Սպիտակի (690 քկմ), Ստեփանավանի (630 քկմ) և Տաշիրի (596 քկմ) շրջանները

Մարզի տարածքը տեղաբաշխված է Վիրահայոց, Փամբակի, Բազումի, Գուգարաց, Շիրակի և Ջավախքի լեռնաշղթաների և դրանց լեռնաբազուկների ու ճյուղավորությունների վրա՝ զբաղեցնելով Փամբակ-Դեբետ գետերի և նրանց վտակների ավազանը, ինչպես նաև Աղստև գետի ավազանի մի մասը: Ծովի մակերևույթից բարձրությունը տատանվում է 490 մ-ից (Դեբետի կիրճ, գյուղ Քարկոփ) մինչև 3196 մ Աջքասարի գագաթ, Տաշիր բարձրությունների վրա:

Լոռու մարզին բնորոշ է չափավոր, զով ու տաք ամառը և մեղմ ու չափավոր ձմեռը: Հունվարի միջին ջերմաստիճանը կազմում է +1.2 մինչև -6-8⁰C, նվազագույնը՝ -34-35⁰C, հուլիս-օգոստոսին՝ 16-24⁰C, առավելագույնը 36⁰C: Անսառնամանիք օրերի թիվը ցածրադիր գոտիներում՝ 90-130 օր: Տեղումները հիմնականում լինում են ուշ գարնանը և վաղ ամռանը, որոնք տարեկան միջին հաշվով կազմում են 500-700 մմ՝ լեռնային բարձրադիր գոտիներում հասնելով 800-850 մմ:

Մարզի տարածքին բնորոշ են լեռնային սարահարթերը, կտրտված հարթավայրերը, դարավանդներն ու կիրճերը զառիթափ ափերով ու անդունդներով 200-400մ ձորերը, զանգվածային և տարանջատ անտառներն ու թփուտները:

Գոտիականությունը լեռնասարահարթային (Տաշիր, Թումանյան, Սպիտակ), լեռնաանտառային (Գուգարք, Թումանյան), լեռնատափստանային (Տաշիր, Ստեփանավան) և ալպյան (Վանաձոր, Սպիտակ) լանդշաֆտով է:

Մարզի հողային կառուցվածքը միջին սևահողային է և կավավազային: Տաշիր, Ստեփանավանի և փոքր չափով Թումանյանի տարածաշրջաններում գերակշռում է սևահողային կառուցվածքը, իսկ Սպիտակի, Գուգարքի և Թումանյանի գերակշռող մասը կավավազային է: Մարզի հողային տարածքը գտնվում է 7-20⁰ թեքության վրա: Իսկ լեռնային մասերում խոտհարքները և արոտավայրերը գտնվում են 40-45⁰-ի վրա: Վարելահողերի 70%-ը գտնվում է հարթավայրերում մինչև 17⁰ թեքության վրա:

Բուսածածկը բազմազան է՝ չորադիմացկուն խոտաբույսերից ու մացառներից, բազմատեսակ բնական ծառատեսակներից, մարգագետնային բույսերից մինչև մշտադալար եղևնին:

Մարզը հարուստ է ջրային ռեսուրսներով և օգտակար հանածոների մեծ պաշարներով: Մեծ գետերից են՝ Փամբակ, Ձորագետ, Տաշիր, Դեբետ, Աղստև, որոնք հիմնականում ունեն լեռնային արագահոս բնույթ: Սնվում են աղբյուրներից և ձնաանձրևային տեղումներից:

Մարզում կա 395 հազար բնակչություն, որից 229 հազարը գյուղական՝ 35230 գյուղացիական տնտեսություններով:

Մարզի հողային ֆոնդը կազմում է 380300 հա, որից՝ գյուղատնտեսական նպատակով օգտագործվում է 51%-ը, անտառները և թփուտները զբաղեցնում են 25%-ը, մնացածը՝ անօգտագործելի տարածություններ են:

Գյուղ պիտանի հողերը կազմում են 193 953 հա, որից վարելահողեր՝ 48 504 հա:

Հավելված 2-ում ներկայացնում ենք փորձադաշտերի սխեմաները, որտեղ ֆերմերները փորձարկումներն իրականացրել են խմբերով:

4. Փորձերի և դիտարկումների արդյունքները

Դիտարկումներն իրականացվել են ծրագրում ընդգրկված մասնագետների, ուսանողների և ֆերմերների աջակցությամբ:

Բուսատեսակներն ընտրիս հաշվի են առել առանձին մարզերի բնակլիմայական պայմանները և ուսումնասիրվող բուսատեսակների կենսաբանական առանձնահատկությունները: Կատարվել է նաև համեմատական ուսումնասիրություն, հաշվի առնելով այն հանգամանքը, թե որ բուսատեսակն է ավելի արդյունավետ:

Ելնելով այս տարվա անբարենպաստ բնակլիմայական պայմաններից, ցանքը կատարվել է մի փոքր ուշ: Որոշ բուսատեսակներ, նույնիսկ եթե շուտ են ցանվել, բավականին տուժել են խոնավությունից: Ամառնացանը կատարվել է ըստ նախատեսված ժամկետների՝ հուլիսի 20-ից օգոստոսի 5-ը (լոբի, ոլոռ, ծաղկակաղամբ, վարունգ, քաղցր եգիպտացորեն, դդմիկ, ճակնդեղ, գազար և այլն): Կանաչեղենների մեծ մասը ցանվել է վաղ գարնանը և երկրորդ անգամ օգոստոսի վերջին:

Այժմ ներկայացնենք դիտարկումների արդյունքներն ըստ գոտիների:

Տեղեկություններ մշակության մեջ ներդրված բույսերի աճի ու զարգացման առանձին փուլերի վերաբերյալ

Հարթավայրային գոտի՝ Արարատի և Արմավիրի մարզերի միջինացված տվյալները
Աղյուսակ 2

(զարնանացան)

N	Մշակաբույսեր	Ցամք/ սածիլում	Ծլում/ սածիլ-ում	մասնա-յակված ծաղկում	Պտղակազմ ավարտում	Բերքահավաք					Բերքատ փութում(ց/ փունջ, հատ/հա
						6					
	1	2	3	4	5	6					7
1	Բանջարային լոբի	17.05	22.05	20.06	27.06	30.06	4.07	10.07	15.07	21.07	200g
2	Ծնեբեկային լոբի	17.05	23.05	22.06	30.06	7.07	12.07	20.07	25.07		140g
3	Դեղին բանջարայ. լոբի	17.05	16.05	20.06	25.06	29.06	3.07	8.07	12.07	18.07	200g
4	Ձնադլոռ	5.04	11.05	21.06	24.06	30.06	3.07	10.07	15.07		120g
5	Կանաչ ոլոռ	7.04	12.05	18.06	22.06	28.06	3.06	8.06	12.06	19.06	200g
6	Քաղցր եգիպտացորեն	10.05	17.05	5.06	15.06	30.06	31.07	10.07	15.07	20.07	110000g
7	Վարունգ տեղական	10.05	15.05	10.06	15.06	22.06	27.06	30.06	5.07	10.07	350g
8	Վարունգ ամերիկյան	10.05	17.05	15.06	21.06	26.06	1.07	7.07	11.07	17.07	320g
9	Վարունգ Ասիական	10.05	16.05	13.06	20.06	25.06	1.07	6.07	11.07	17.07	300g

10	Բադրիջան	15.02 15.05	-	20.06	1.07	10.07	17.07	25.07	5.08	15.08	420g
11	Բադրիջան կլոր	15.02 15.05	-	22.06	3.07	13.07	18.07	75.07	6.08	18.08	380g
12	Բամիա	10.05	17.05	30.06	10.07	20.07	25.07	30.07	5.08	10.08	120g
13	Դդմիկ	10.05	16.05	13.06	21.06	25.06	1.07	6.07	11.07	17.07	450g
14	Դդում	10.05	18.05	10.07	18.07	-	-	-	-	25.09	520g
15	Կարմիր կաղամբ	15.03	10.05-	-	25.07	20.09	25.09	6.10		25.07- 15.10	700g
16	Սպիտակ կաղամբ	15.03 10.05	-10.05	-	20.07	20.09	26.09	16.10	13.10		700g
17	Պեկինյան կաղամբ	15.02	10.05	-	22.06	30.06	5.07	10.07	15.07		450g
18	Կոլրաբի կանաչ	1.05	10.05	-	1.06	15.06	20.06	25.06	5.07	10.07	100000hun
19	Կոլրաբի կարմիր	15.03 10.05	10.05	-	5.06	20.06	25.06	30.06	6.07	12.07	100000hun
20	Բրոկոլի	15.03	10.05	-	10.06	20.06	30.06	5.07	10.07	15.07	150g
21	Ծաղկակաղամբ	15.03	10.05	-	10.07	20.08	30.08	10.09	20.09	5.10	300g
22	Բրյուսելյան կաղամբ	15.03	10.05	-	-	-	-	-	-	-	600g
23	Խտտա	25.07	9.08	13.08	30.08	05.09	12.09	17.05	24.05	30.09	
24	Արտիշոկ	25.03 g	15.05	-	10.08	20.08	25.08	30.08	1.09	10.09	150000hun
25	Հազար կանաչ	20.03	5.05	-	15.05	25.05	20.06	5.06	10.06	15.06	90000hun
26	Հազար կարմիր	20.03	5.05	-	20.05	30.05	15.06	10.06	20.06	30.06	90000hun
27	Հազար տեղական	20.03	5.05	-	25.05	1.06	10.06	20.06	30.06	1.07	90000hun
28	Հազար սառցային	20.03	5.05	-	30.05	10.06	15.06	25.06	30.06	5.07	90000hun
29	Պոմիդոր տեղ. /սորս/	10.03	15.05	25.05	10.06	20.07	25.07	30.07	5.08	15.08	400g
30	Պոմիդոր մանր /վիշնյա/	10.03	15.05	25.05	10.06	25.07	30.07	5.08	10.08	20.08	350g
31	Պոմիդոր հիբրիդ	10.03	15.05	20.05	5.06	20.07	25.07	30.07	10.08	15.08	700g
32	Տաքդեղ քաղցր	10.03	15.05	25.05	15.06	25.06	1.07	5.07	15.07	20.07	400g
33	Տաքդեղ կծու	10.03	15.05	20.05	10.06	20.06	25.07	30.07	5.08	10.08	200g
34	Ծնեբեկ	25.04	-	-	-	-	-	-	-	-	-
35	Ռեհան մանուշակագ.	30.05	5.06	-	20.06	25.06	30.06	10.07	15.07	30.07	90000փջ
36	Ռեհան քաղցր	1.05	3.06	-	20.06	25.06	30.06	10.07	20.07	25.07	90000փջ
37	Ռեհան լիմոնային	1.05	3.06	-	20.06	25.06	30.06	10.07	20.07	25.07	85000փջ
38	Սամիթ	1.05	3.06	-	15.06	20.06	25.06	1.07	5.07	15.07	60000փջ
39	Հոռոմ սամիթ	1.05	5.06	-	25.06	1.07	30.06	10.07	20.07	25.07	60000hun
40	Մաղադանոս	1.05	7.06	-	25.06	1.07	15.07	20.07	30.07	1.08	105000փջ
41	Մաղադանոս զանգուր	1.05	7.06	-	25.06	5.07	15.07	20.07	30.07	3.08	100000փջ
42	Համեն	1.05	5.06	-	15.06	20.06	25.06	30.06	5.07	15.07	100000փջ
43	Նեխուր	1.05	8.06	-	15.06	30.06	10.07	15.07	25.07	5.08	55000
44	Երիցուկ դեղատնային	1.05	7.06	-	25.07	30.06	30.07	1.07	10.08	15.08	2g
45	Խնկածաղիկ	10.05	17.05	-	5.07	15.07	22.07	29.07	4.04	10.08	80000փջ
46	Ճարճատուկ	10.05	16.05	-	5.07	15.07	25.07	5.08	10.08	20.08	90000փջ
47	Կորթին/Ծիթրոն	10.05	16.05	-	20.06	30.07	25.07	30.06	10.07	20.07	85000փջ
48	Ուրց	10.05	20.05	-	5.07	5.07	15.07	25.07	30.08	10.08	
49	Անանուխ	10.05	30.05	-	5.07	10.07	15.07	25.07	30.07	10.08	105000փջ
50	Բոկ չոյ	10.05	25.05	-	10.07	15.07	20.07	30.07	5.08	10.08	
51	Շալֆեյ	10.05	20.05	-	5.07	10.07	15.07	25.07	30.08	5.08	90000փջ
52	Թուրիջախտ	10.05	25.05	-	5.07	15.07	22.07	29.07	4.08	10.08	100000փջ

**Տախալեռնային գոտի՝ Արագածոտնի, Կոտայքի մարզերի միջինացված տվյալները
Աղյուսակ 3**

(զարմանացան)

N	Սշակաբույսեր	Ցանց/ սաճիլում	Ճյուղ/ սաճիլում	մասսա- յական ծարկում	Պտուկ- կազմն վրում	Բերքա հավաք				Բերքատվությ ունը
						1	2	3	4	
1	Բանջարային լոբի	1.06	7.06	17.06	27.06	30.06	5.07	10.07	15.07	180g
2	Դեղին բանջարային լոբի	1.06	7.06	16.06	25.06	29.06	4.07	8.07	12.07	190g
3	Քաղցր եգիպտացորեն	20.05	27.05	16.06	29.06	10.07	15.07	25.07	30.08	95000կղր
4	Վարունգ տեղական	20.05	26.05	6.06	18.06	22.06	26.06	2.08	5.08	250g
6	Բադրիջան	2.03	20.05	5.07	15.07	25.07	30.07	5.08	15.08	380g
7	Բամիա	2.03	20.05	1.07	10.07	20.07	25.07	30.07	15.08	120g
8	Դդմիկ	2.03	20.05	1.07	8.07	15.07	25.07	30.07	15.08	400g

